Արձանագրության 3

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ.138 մանկապարտեզի փոթորկից քանդված թեք տանիքի վերականգնման և Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոցի հ. 25/2, հ.25/3 շենքերի մոտ փոթորկից փլուզված հենապատի վերականգնման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ՀՄԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

03.07.2017թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Գևորգյան /գնահատող/, Ե. Մատասյան/ գնահատող /
Ա. Մարգարյան/բացող/, Ս. Գևորգյան/բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Է. Շաքարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Մեկ անձ գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել մեկ անձ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԷԼՄԱ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ՀՄԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ « ԵՔ-ՀՄԱՇՁԲ-17/1» ծածկագրով մեկ անձ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Է. Շաքարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի հ.138 մանկապարտեզի փոթորկից քանդված թեք տանիքի վերականգնման և Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոցի հ. 25/2, հ.25/3 շենքերի մոտ փոթորկից փլուզված հենապատի վերականգնման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԷԼՄԱ» ՍՊԸ-ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Է. Շաքարյան

Անդամներ՝ ---------- Լ. Գևորգյան

---------- Ա. Մարգարյան

---------- Ս. Գևորգյան

---------- Ե. Մատասյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան